

գործութիւնները կատարուէին ուրիշ կրօնի յարկի տակ: Ի հարկէ ո՛չ, որովհետեւ նրանց վրդովում է առաւելապէս այն հանգամանքը, որ այդ կատարումն քրիստոնէակաները, Նրաւորդգումէն որ Աւետարանի ոգւոյն կատարելապէս հակասում են այս եղեւնագործութիւնները. հետեւաբար ստութեամբ արգարացնելով այս օրինակ եղեւնագործութիւնները նրա անունով, նշանակում է լուսանք թափել, չարախօսել Աւետարանի վերայ: Եւ այսպէս իրական դժգոհութիւնը որ ծառայում է ինձ որպէս պատասխան վկայում է, որ Աւետարանը անմեղ է այն չարութեան մէջ որ յաճախակի կատարուում է Նրա անունով, որ նա ամենալուսապատանաւորն է բոլոր նեղօտկիրների համար և որ, վերջապէս մարդկութիւնը հետեւել է Նրա հրաւերին: Որը ասաց. «Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»: (Մատթ. ԺԱ. 28) Եղբայրներ, երբ անհաւատ — նկատում է անարգարութիւններ, որոնք կատարուում են այն աշխարհներում որտեղ Աւետարանի քարոզութիւնը մուտք է գործել, յայտնակրտարած բացականչում է. «Որեմն ի՞նչ բանի է արդեօք ծառայում ձեր կրօնը»: Բայց ես կասեմ որ ի ներկայութեան այս փաստերի հարկաւոր է բնդհակառակ կրկնել մի հանձարեղ մտածողի (Յրանկիին) խօսքերը. «Եթէ մարդիկ քրիստոնէական կրօնը դաւանելով այդ չափ վատ են, հապա ի՞նչպէս կլինէին նրանք առանց նրան»: Այն ի՞նչ կպատահէր նրանց հետ առանց այս Աւետարանի, որին նրանք մեղադրում են: Ի՞նչ դրութեան էր աշխարհը մինչև Փրկիչը, և ինչի՞ նման կլինէր առանց Նրան, առանց այս Արեգակի որ լուսաւորում տարացնում է ամենափոքր արարածներն անգամ: Այն դորհուրելի խաւարը, որ առանց նրան կծածկէր երկիրը, ձեզ կհշտկացնէր, թէ և շատ ուշ, թէ ինչ մեծ բարեբեր գուք զրկուեցիք:

Աերջը միւս համարում.

Թարգմ. ԽՈՐԷՆ ՔԸԼ. ԽԱՆԶԱԴԵԼՆԵՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՉԱՅՆԸ:

«Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես ծանալեմ զնոսա, եւ զկնի իմ զան: Եւ ես տամ նոցա զկեանս յախտնականս, եւ մի կորիցն յախտնան եւ մի՛ որ յափշտակեցէ զնոսա ի ծեռաց խնց:» Եսայ. ԺԸ, 27:

(ՔԸԸԸ).



Ովուի ամենամօտիկ սիրելիներն իւր ոչխարներն են. ոչխարների ամենասիրելին իւրեանց հովիւն է: Բաւական է հովուի մի ձայնը, որ ժողովուն իսկոյն բոլոր ոչխարները, մինչդեռ օտարի ձայնը երբէք նոցա չէ զբաւում: Հովիւը համարձակ մանում է իւր ոչխարների փարախը, առնուն անուն կանչում է նոցա և տանում է արածելու, բոլորն էլ հետեւում են նորա ձայնին: Նորա տարած տեղերում արածում են և երբ վերադառնում են, հետեւում են նրան զէպի մակադատեղին կամ զէպի փարախը: Ստարը զողի պէս է մանում փարախը և զողի ձայնը խրանեցնում է ոչխարներին. իսկ եթէ օտարը ջանայ նմանեցնել իւր ձայնը հովուի ձայնին, անյաջող կլինի և չի կարող ոչխարների մշտական վատահալութիւնը գանել: Հարազատ հովուի ձայնն է միայն նոցա առաջնորդը և հաւատարիմ ոչխարներն են հովուի ձայնին հետեւողները:

Մեր հովիւն էլ Քրիստոսն է և մենք՝ Նորա ոչխարներն ենք. հազար ձայների մէջ Քրիստոսի ձայնը մօտիկ է մեր սրտին: Հազար բարեկամների մխիթարող խօսքերից քաղցր և անոյշ է Քրիստոսի ձայնը. հազարաւոր ծանօթների օգնութիւններից և դարմաններից առաւել կազդուրիչ և դորացնող է Քրիստոսի ձայնը: Մենք՝ Նորա ձայնը լսելով՝ պէտք է հե-

տեւերք Նորան և Նա խոստանում է ապ մեզ յաւիտեանական կեանք: Քրիստոս ինքը կեանք է և մենք հեռակեղով Նորան՝ երբեք չենք կորչել: Քրիստոս անձնուէր հովիւ է, որ իւր անձը զօհ է բերել իւր ոչխարների համար և ոչ ոք չի կարող խլել մեզ Նորա ամուր ձեռքերից: Եթէ միայն միշտ լսենք Նորա ձայնին:

Այժմ դուք կասէք՝ Քրիստոսին մենք չենք տեսնում: Քրիստոսի ձայնը մենք չենք լսում: Քրիստոսի ձայնը մենք չենք ծանաչում: Ինչպէս անենք որ չկորչենք: Բայց մի՞թէ կարող էք այդպէս ասել, ոչ երբեք: դուք միշտ տեսնում էք Քրիստոսին: դուք միշտ լսում էք Նորա ձայնը: դուք միշտ ծանաչում էք այդ հովուական մխիթարիչ ձայնը:

Երբ որ Քրիստոս վերանում էր այս աշխարհի երկրաւոր կեանքից, հրամայեց իւր աշակերտներին դնալ և աշակերտել բոլոր հեթանոսներին: միտել նոցա յանուն Հոր և Արդւոյ և Հոգւոյն Սրբոյն ուսուցանել այն ամեններն ինչ որ ինքը պատուիրել էր: Յրուեցան առաքեալները գէպի հարեան երկիրները: նոքա քարոզեցին Քրիստոսի պատուիրանները ամեն տեղ: քարոզեցին հաւատալ Նորան և մկրտեցին ամենքին: որոնք հաւատում էին: Առաքեալների բերանով Քրիստոս էր խօսում: Քրիստոս էր քարոզում և իւր ձայնի շուրջն էր ժողովում բոլոր հաւատացելոյ և հաւատքի ծառաներին: Սոցա քարոզը լոյս էր և կեանք: իշխաններն ու մեծատունները նայում էին զիւզացու: զերիներին և ծառաներին: իրրե ստրուկներին իրրե անհոգի անասուններին վրայ: առաքեալները քարոզում էին թէ բոլոր մարդիկ հաւատար են Աստուծոյ առաջ: բոլոր ազգերը ներքին տարբերութիւն չունին արժանիքով: չկայ ստրուկ չկայ անհոգի չկայ հրէայ: չկայ հեթանոս: ոչ մէկի մէջ խտրութիւն չկայ Աստուծոյ առաջ: Թէ շինական թէ քաղաքացի թէ աղքատ թէ հարուստ թէ զերի և թէ իշխան—բոլորն էլ եղբայրներ են և իւրաքանչիւրը պէտք է իւր պարտքը կատարէ: Տղամարդիկ անգամ նայում էին կանանց իրրե կէս մարդկանց վրայ: առաքեալ-

ները քարոզեցին: որ կինը մարդու հետ հաւասար պատիւ ունի և միայն հնազանդ պէտք է լինի իւր ամուսնուն: որի փառքն է ինքը:

Առաքաշտութիւններից և անհաւատութիւններից ծագել էին բազմաթիւ մեղքեր: յանցանքների անբարոյականութիւնների որոնց մէջ մարդիկ սուղուում էին մեռաւում և փշանում և ի վերջոյ յաւաստաւում՝ մատնում էին վերջնական կորստի: Առաքեալք քարոզեցին պաշտել Աստուծոյ: քարոզեցին որ իւրաքանչիւր ոք պէտք է ազատուի և Աստուծոյ ազատ որդին լինի: քարոզեցին որ մարդ Աստուծոյ առձարն է: Աստուծոյ պատկերն է: ուրեմն և պէտք է մաքուր պահել այդ առձարը պղծութիւններից ու մեղքերից: Աստուծոյ օ: պատուիրաններով առաջնորդուի: ձգտի գէպի աստուածային կատարելութիւն: բայց որովհետեւ մարդս ունի նաեւ թուլութիւններ և անկարողութիւններ: Քրիստոսի մարմինն և արիւնը միշտ կիրկէ նորան: կուղզէ: ոյժ կապ: կրարձրացնէ և կքաջաբերէ: Նոքա քարոզեցին Քրիստոսի ճշմարիտ պատուիրանը թէ մարդ ունի զանազան պարտքեր: որոնց մէջ զխաւորներն են պարտք առ Աստուած: պարտք առ կայսրն և պարտք առ ընկերը: Եթէ ամեն ոք իւր այս պարտքերը կատարէ: փայլելոյ թիւն կթաղաւորէ աշխարհում:

Այնուհետեւ ոչ իշխանը կնայէ շինականին իրր մի անշունչ գործիքի վերայ: ոչ հարուստը կարհամարհէ աղքատին: ոչ աղամարդը կմերժէ կնոջ իրաւունքները: ոչ տան տէրը կը չարչարէ իւր ծառային և ոչ էլ մարդ չարութիւն կանէ իւր ընկերին: այլ ամենքն էլ ճշմարտութեան ծանապարհը կրանեն և երբեք իրար իրաւունքներն ու պատիւը չեն խախտի: Ամեն մէկն ունի անձնատիրութիւն: ամեն մէկը պահպանում է իւր շահերը: բայց եթէ ամեն ոք զիտակից լինի թէ իւր նման մարդիկ են: այն ժամանակ ամեն մարդ որ սիրում է Աստուծոյ: կսիրէ և իւր ընկերին իւր նման մարդուն և ինչպէս չէ ուզում որ ուրիշները զգչեն իւր շահերին: արհամարհեն

խը անձը, նոյնպէս և չի անիլ նոյնը ուրիշներին: Չի դպչիլ ուրիշի շահերին և չի առիլ այլոց: Այսպիսով մենք փորձով իսկ տեսնում ենք, որ Քրիստոսի ձայնին հետեւելը մեզ մեծամեծ օգուտներ է տալիս ոչ միայն այստեղ, այլ և հանդերձեղ կեանքում: Քրիստոս խոստանում է չեմպեկը, որ իւր ձայնին հետեւողները խլուին կամ յափշտակուին իւր ձեռքից: Մա խնամում է իւր հաւատարիմ հաւատացողին ամեն քայլափոխում: Մա մխիթարում է նորան իւր հայրական քաղցը ձայնով և որ զլխաւորն է՝ Մա ցոյց է տալիս մեզ այն ճանադարհն, որով կարող ենք միշտ բախտաւոր լինել: Բայց անանցական օգուտը Աստուծոյ արքայութիւնն է, որ Քրիստոս տալիս է իւր ձայնը լողներին: Քաջ հովիւը դնում է իւր անձը իւր հօտի ազատութեան համար, այդ մենք գիտենք մեր կեանքի բոլոր փորձերից: Քրիստոս էլ ամենայնով թական անձնազոհութեամբ նուիրեց իւր անձը մարդկանց համար: Երբեք չի ունի որ Մորան հաւատայ՝ երբեք չի ունի: Մա շարշարուեց և մինչև անգամ խաշուեց, որ քաւուի այդով մարդկանց մեղքերը: Եւ ահա մենք հաւատալով Մորան հետեւելով Մորա ձայնին իրրեւ ճշմարիտ հովուի ճշմարիտ հօտի կհասնենք ցանկացեալ նպատակի: Քրիստոսի ձայնը միշտ մեզ արթնն կպահէ և կտանէ գէպի վրկութիւն: միայն թէ կամենանք քաջ պահել մեր ախանջները: Ամենայն ոք որ ճշմարտութիւնից է, ասում է Քրիստոս կրէ իմ ձայնիս: ու որ սրտանց հակուած է ճշմարտութեան նա կրի Քրիստոսի խօսքը: Քրիստոսի ձայնը: Լսողի մէջ կթագաւորէ ճշմարտութիւնն, առանց որի չը կայ ոչ մի բախտ:

Բայց Քրիստոսի հօտի ճշմարիտ անդամը մինչև անգամ գերեզմանի մէջ լսելու է Քրիստոսի ձայնը: «մեռեալները կրեն Աստուծոյ Որդու ձայնը, ասում է Քրիստոս և որոնք կրեն, կապրին:» նոքա կթառանգեն Աստուծոյ արքայութիւնը: նոքա կփայլեն այն առանցական բարեքներն, որոնք պատրաստել է Աստուած իւր սիրելիների համար: Ահա այս-

քան վրկարար է մեզ համար Քրիստոսի ձայնը թէ այստեղ և թէ հանդերձեալում:

Ուրեմն որքան ուրախութեամբ պէտք է ամենքս էլ Քրիստոսի ձայնին ախանջ դնենք և միթէ դուք չէք լսում Քրիստոսի ձայնը, դուք զարմանում էք իմ հարցի վրայ: Հապա Քրիստոսի ձայնը չէ ասորի Աւետարանի ձայնը, որ ամեն որ կարդում ենք Ս. Եկեղեցում: ունիք հաւատք, ապա և Քրիստոս ձեր մէջ է բնակուում և առձար էք: Հոգւոյն Սրբոյ և կենդանի է ձեր մէջ Քրիստոսի Աւետարանի ձայնը: Հապա Քրիստոսի ձայնը չէ Եկեղեցու կոչման, որ զանգահարելով կոչում է առ մենքիդ դարձ ազօթելու և Քրիստոսի ձայնը լսելու: եթէ լսող է ձեր ախանջը, ամեն անգամ այս կոչմանը կյիշեցնէ ձեզ աստուածաշին պատուիրանները: Հապա Քրիստոսի ձայնը չէ նորա առաքելական փոխանորդի՝ մեր հովուապետ մեր Ահհարիա Հայրիկի խօսքը, որ ամեն անգամ տալիս է մեզ Քրիստոսի պատուիրաններ և հրամայում է անգագար «Հայեր, Հայեր, սիրեցեք միմեանց, օգնեցեք ազգաթին և անանկին, պինդ պահեցեք ձեր հաւատն և նախնեաց սուրբ աւանդութիւնները: Հապա Քրիստոսի ձայնը չէ հայ քահանայի խօսքն, որ Աւետարանն է բարձրաբարբառ կենդանացած իւր սպասաւորի բերանում: Այո՛ ձեր մէջ միշտ հնչում է Քրիստոսի ձայնը, ձեր մէջ միշտ կենդանի է նորա Աւետարանի ձայնը, ձեզ միշտ հրաւիրում է Եկեղեցին, որ զար և լսէք այդ ձայնը և նա հովանի լինի ձեզ: Սինչեւ այն ձայններն, որոնք օտար են Աւետարանից, որոնք Աւետարանի խօսքը չեն բովանդակում որոնք հակառակ են Աւետարանին, այդպիսի ձայնները Քրիստոսի թշնամեաց ձայններն են: Այդ ձայններով ձեզ զրաւել կամեցողները զոգեր են և աւաղակներ, և միթէ դուք կրէք և կհետեւեք զոգերի և աւաղակների ձայններին, որոնք ձեզ գէպի կորուստ և գէպի մահ միայն կարող են տանել:

Ահա եղբայրներ, ամեն բոլոր երբ լսում էք Եկեղեցու կոչման ձայնը, յիշեցեք Քրիս-

տասի պատուիրանները, դիմեցէք գէպի Նկե-
ղեցի և զօրացէք առաքինութիւններով: Ամեն
անգամ երբ լսում էք կոչնակի ձայնը, յիշե-
ցէք մեր Հայրիկի խօսքերը և օգնեցէք աղ-
քատին: սիրեցէք միմեանց և պաշտեցէք Աս-
տուծոյ ձեր Ս. Նկեղեցում: Ամեն անգամ երբ
լսում էք քահանայի Հայր մեր: յիշեցէք ձեր
պարտերը և դիմեցէք զգլխամբ գէպի Քրիս-
տոսի կենդանարար Հաղորդութիւնը: Մտա-
ճեցէք: արդեօք ամենքդ էլ այգպէս էք ա-
նում:

Արդ՝ թող մեր ամենիս նշանաբանը լինի
Ս. Գրքի պատուէրը. «Զաւր Աստուած մեր
պաշտեցուք և ձայնի նորա լուսիցուք»: (Յեւ.
Իղ. 24-):

Ը. Տ. Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԵՏԱԼՈՅՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՌՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՎԵՐԴՕՆՈՒՄ.



(Շարունակութիւն) *

Բթութիւնն ընդհանրա-
պէս կատարուում էր
Պէտապօցցու եղանա-
կով: Բայց Ֆրէօրէշն
ու նրա աշխատակից-
ները մտադիր չէին մա-
տակարարել աշակերտ-
ներին որոշ, գրական գիտութիւն: այլ միայն
գրել նրանց գործունէութեան առաջացնել
նրանցում նախաձեռնութիւն (ինիցիատիւ) և
ընդունակութիւնների ազատ արտայայտում:
Ֆրէօրէշը կարծում էր, որ եթէ աշակերտնե-
րը կանանու որ աշխատանքի սովորեն, լրիւ
կատարեն ամեն մի գործ՝ նրանք վերջացնելով
իրենց ուսումը Քէյլհաուի ուսումնարանում:

Տես նախընթաց համարում

չեն ունենայ սխառմատեղաբար սովորած գի-
տութիւն: Բայց կեանքի համար պիտանի կլի-
նեն:

Լանդտալը և Միգդէնդօրֆը սկզբում Ֆր-
էօրէշի առաջնորդութեամբ ուսումնասիրեցին
մանկավարժական եղանակները:

1826 թ. Ֆրէօրէշը հրատարակեց «մարդու
կրթութիւնը»: Գլխաւոր է համառօտ բացատ-
րել այդ գրքի մէջ բովանդակած վարդապե-
տութիւնը: Պա մի այնպիսի դիրք է: որ դժ-
ուար է քննութեան ենթարկել: Ֆրէօրէշի
յարգողները համաձայնում են, որ այդ գրքում
չի յայտնուած մի որոշ սխառման մի բովան-
դակ վարդապետութիւնն ասում են, որ դա
ուսելի անկապ զաղափարների մի հաւաքածու
է: Մեզ թուում է, որ կարելի է այդ գրքում
զեւեղումով գլխաւոր զաղափարը ձեւակերպել
հեռեկալ կերպով երեք գործիչ տարրեր (fac-
teur) պէտք է զարգացմանը նպաստեն: այն է՝
կրօնը, բնական գիտութիւնները և լեզուն: որ
միացնում է այդ երեք մասերը: որանք նշանա-
կում են 1, Աստուած, 2, բնութիւն, 3, մարդ:

Մարդուն ստեղծել է Աստուած, նա կայ
Աստուծոյ համար և Աստուծոյ շնորհին է
ապրում: այդ պատճառով էլ պէտք է ձգտի
բարձրանալու մինչև Քրիստոսին դաւանելու
աստիճանը: «Ուսումնարանն ասում է նա ա-
մենից առաջ պէտք է տայ քրիստոնէական
կրթութիւն: Բնական գիտութիւնների վերա-
բերութեամբ Ֆրէօրէշը խորհուրդ է տալիս
ուսուցիչներին, ծնողներին, որ այդ գիտու-
թիւնները սովորեցնեն ոչ թէ զրբերով, այլ
բնութիւնը գործնական կերպով զննելով—ցու-
ցական ձևով: Պա ասում է. «Արա՛ն այնպէս
ինչպէս երեխան է անում: երբ նա մի բան
չը գիտէ՝ հօրը կամ մօրն է հարցնում: դու
էլ անգեկութիւնները ժողովիր մայր բնութիւ-
նից և Հայր Աստուծուց՝ բնութեան մէջ: Ուղ-
ղապէս զիմիւր գէպի այն աղբիւրը, որից ամեն
ինչ բոխում է:»

Ահա թէ նա ի՞նչ է ասում իր երրորդ են-
թադրութեան (զաղափարի) մասին: որ մար-
դուն է վերաբերում: «Կրօնը յայտնում է է-